



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 74-Ա

Արթիկ համայնք

23 դեկտեմբերի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 թվականի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 14 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 30-ի թիվ 54-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 60-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Բորիս Ավագյան/
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին: /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Բորիս Ավագյան/
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2020 թվականի բյուջեի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) բաժնում նախատեսված գումարից հատկացում կատարելու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Բորիս Ավագյան/
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի վարչական տարածքում 2021 թվականի աղբահանության իրականացման կարգը և սանիտարական մաքրման սխեման հաստատելու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Բորիս Ավագյան/
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճանի համար հավելավճար սահմանելու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Բորիս Ավագյան/
6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Բորիս Ավագյան/


7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքային սեփականություն հանդիսացող հակոբյան 32/6 հասցեում գտնվող գրասենյակային շինությունից 49,57 քմ. մակերեսով առանձնացվող տարածքը 6 ամիս ժամկետով վարձակալության իրավունքով տրամադրելու մասին: /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Բորիս Ավագյան/
8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 08-ի թիվ 57-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին /զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ՝ Բորիս Ավագյան/

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 10 անդամներ՝

Կողմ՝ 10 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 10

Վարդանյան Ոսկան



Հակոբյան Տարոն



Ղուլիջոլյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ



Վարազյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան



Նիկողոսյան Արմեն

Գասպարյան Վաղարշակ




Չոփիկյան Արտակ

Սահակյան Ահարոն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝



Բ. ԱՎԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
2020 թվականի 23 դեկտեմբերի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 75-Ն

Արթիկ համայնք

23 դեկտեմբերի 2020 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 60-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 60-Ն որոշման մեջ բյուջեի եկամտային և ծախսային մասերում կատարել հետևյալ փոփոխությունները

Եկամտային մասում

1) <<Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ>> տողում գրված <<24012000 քսանչորս միլիոն տասներկու հազար>> թիվը և բառերը փոխարինել <<24462000 քսանչորս միլիոն չորս հարյուր վաթսուներկու հազար>> թվով և բառերով:

2) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) տողում գրված <<0 զրո>> թիվը և բառը փոխարինել <<23164400 քսաներեք միլիոն մեկ հարյուր վաթսուներորս հազար չորս հարյուր>> թվով և բառերով:

Ծախսային մասում

1) Սոցիալական հատուկ արտոնություններ /այլ դասերին չպատկանող/ բաժնի <<Այլ նպաստներ բյուջեից>> (4729) հոդվածում գրված <<4722000 չորս միլիոն յոթ հարյուր քսաներկու հազար>> թիվը և բառերը փոխարինել <<5172000 հինգ միլիոն մեկ հարյուր յոթանասուներկու հազար>> թվով և բառերով:

2) Ճանապարհային տրանսպորտ բաժնի <<Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում>> (5113) հոդվածում գրված <<19524538.90 տասնինը միլիոն հինգ հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր երեսունութ դրամ ինսուն լումա >> թիվը և բառերը փոխարինել <<42688938.90 քառասուներկու միլիոն վեց հարյուր ութսունութ հազար ինը հարյուր երեսունութ դրամ ինսուն լումա>> թվով և բառերով:/Ասֆալտբետոնյա ծածկույթի վերանորոգում և պահպանում սուբվենցիոն ծրագիր/

3) Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ բաժնի

ա/ <<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> (4111) հոդվածում գրված <<4622300 չորս միլիոն վեց հարյուր քսաներկու հազար երեք հարյուր>> թիվը և բառերը փոխարինել <<3288300 երեք միլիոն երկու հարյուր ութսունութ հազար երեք հարյուր>> թվով և բառերով:

բ/ <<Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ>> (4112) հոդվածում գրված <<536000 հինգ հարյուր երեսունվեց հազար>> թիվը և բառերը փոխարինել <<670000 վեց հարյուր յոթանասուն հազար>> թվով և բառերով:

գ/ <<Հատուկ նպատակային նյութեր>> (4269) հոդվածում գրված <<0 զրո>> թիվը և բառը փոխարինել <<1200000 մեկ միլիոն երկու հարյուր հազար>> թվով և բառերով:

4. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/ բաժնի

ա/ <<Այլ կապիտալ դրամաշնորհներ>> (4657) հոդվածում գրված <<0 զրո>> թիվը և բառը փոխարինել <<3248000 երեք միլիոն երկու հարյուր քառասունութ հազար>> թվով և բառերով:

բ/ <<Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ>> (4239) հոդվածում գրված <<970000 ինը հարյուր յոթանասուն հազար>> թիվը և բառերը փոխարինել <<1060000 մեկ միլիոն վաթսուն հազար>> թվով և բառերով:
5. << համայնքների պահուստային ֆոնդ բաժնի <<Պահուստային միջոցներ>> (4891) հոդվածում գրված <<36369680 երեսունվեց միլիոն երեք հարյուր վաթսունինը հազար վեց հարյուր ութսուն>> թիվը և բառերը փոխարինել <<33031680 երեսուներեք միլիոն երեսունմեկ հազար վեց հարյուր ութսուն>> թվով և բառերով:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 10 անդամներ՝

Կողմ՝ 9, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 9

Վարդանյան Ոսկան

Ղուլիջոլյան Ռաֆիկ

Վարազյան Մեսրոպ

Նիկողոսյան Արմեն

Չոփիկյան Արտակ

Հակոբյան Տարոն

Մկրտչյան Մուշեղ

Աբրահամյան Ալեքսան

Գասպարյան Վաղարշակ

Դեմ՝ 1

Սահակյան Ահարոն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՄԱԿԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2020թվականի 23 դեկտեմբերի



 Բ. ԱՎԱԳՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 76-Ն

Արթիկ համայնք

23 դեկտեմբերի 2020թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2021 թվականի բյուջեն համաձայն հավելվածի.

1) եկամուտների գծով՝ 694669,2 հազար դրամ

2) ծախսերի գծով՝ 694669,2 հազար դրամ

3) հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ 0.0 հազար դրամ

2. Թույլատրել համայնքի ղեկավարին՝ կատարելու բյուջեով իրականացվող յուրաքանչյուր ծրագրի գծով սահմանված գումարի 10% չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ՝ ըստ մասնագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:

3. Սահմանել, որ բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի միջև վերաբաշխումների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել այդ ծրագրերի համար հաստատված ընդհանուր գումարի 3%-ը:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 10 անդամներ՝

Կողմ՝ 10 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 10

Վարդանյան Ոսկան

Հակոբյան Տարոն

Ղուլիջոդյան Ռաֆիկ

Մկրտչյան Մուշեղ

Վարազյան Մեսրոպ

Աբրահամյան Ալեքսան

Նիկողոսյան Արմեն

Գասպարյան Վաղարշակ

Չոփիկյան Արտակ

Սահակյան Ահարոն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝

Բ. ԱՎԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
2020թվականի 23 դեկտեմբերի

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ (ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ)

(մարզի անվանումը)

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ

(քաղաքային, գյուղական, թաղային համայնքի անվանումը)

2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵ

Հաստատված է Արթիկ համայնքի

(քաղաքային, գյուղական, թաղային համայնքի անվանումը)

ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N 75-Ն որոշմամբ

(ամիսը, ամսաթիվը)

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝**

Բ. ԱՎԱԳՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 77-Ա

Արթիկ համայնք

23 դեկտեմբերի 2020թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԱՅԼ ԴԱՍԵՐԻՆ ՉՊԱՏԿԱՆՈՂ)
ԲԱԺՆՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻՑ ՀԱՏԿԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ
համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 46-Ն որոշումը Հայաստանի
Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2020 թվականի
բյուջեի սոցիալական հատուկ արտոնություններ բաժնի /այլ դասերին չպատկանող/
բաժնում նախատեսված գումարից կատարել հատկացում 680000 (վեց հարյուր ութսուն
հազար) դրամ, որից՝
 - Արթիկ համայնքից արցախյան 2-րդ պատերազմում ռազմական գործողությունների
ժամանակ վիրավորված 9 զինծառայողներին՝ յուրաքանչյուրին 50000 /հիսուն հազար/
դրամ՝ համաձայն հավելված 1-ի:
 - Արթիկ համայնքի անապահով բնակիչներին՝ 230000 (երկու հարյուր երեսուն հազար) դրամ՝
համաձայն հավելված 2-ի:

**Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի
ավագանու 10 անդամներ՝**

Կողմ՝ 9 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1

Կողմ՝ 9

Վարդանյան Ոսկան

Ղուլիջօղլյան Ռաֆիկ

Վարազյան Մեսրոպ

Նիկողոսյան Արմեն

Չոփիկյան Արտակ

Հակոբյան Տարոն

Մկրտչյան Մուշեղ

Աբրահամյան Ալեքսան

Գասպարյան Վաղարշակ

Ձեռնպահ՝ 1

Սահակյան Ահարոն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝

Բ. ԱՎԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,

2020թվականի 23 դեկտեմբերի

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Արթիկ համայնքի ավագնու 2020 թվականի
դեկտեմբերի 23-ի N 77-Ա որոշման

Ց ՈՒ Ց ԱԿ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՑԱԽՅԱՆ 2-ՐԴ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՌԱԶԱՄԱԿԱՆ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՎԻՐԱՎՈՐՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ

h/h	Ազգանուն, Անուն, Հայրանուն	Գումարը /Հայաստանի Հանրապետության դրամ/
1	Զախալյան Լյուդվիգ Երջանիկի	50000
2	Իգիթյան Անդրանիկ Արմենի	50000
3	Երիցյան Բյուզանդ Ժուլվերի	50000
4	Հակոբյան Զորիկ Կամսարի	50000
5	Վարդանյան Մխիթար Աշոտի	50000
6	Պապիկյան Գարիկ Ալբերտի	50000
7	Կյուրեղյան Սուրեն Լևիկի	50000
8	Գրիգորյան Սիփան Արտակի	50000
9	Աթոյան Գառնիկ Զարգանդի	50000
	Ընդամենը	450 000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝



Handwritten signature Բ. ԱՎԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
2020 թվականի 23 դեկտեմբերի

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Արթիկ համայնքի ավագնու 2020 թվականի
դեկտեմբերի 23-ի N 77-Ա որոշման

Ց ՈՒ Ց ԱԿ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

h/h	Ազգանուն, Անուն, Հայրանուն	Գումարը /Հայաստանի Հանրապետության դրամ/
1.	Ավետիսյան Եվգինե Գեղամի	10000
2.	Եզնալյան Անահիտ Արտավազդի	10000
3.	Աբրահամյան Էմմա Լևոնի	10000
4.	Հաջաթյան Նատալյա Վոամի	10000
5.	Օգանեզովա Նոննա Մկրտիչի	10000
6.	Ղոթայան Արփինե Միսաքի	10000
7.	Զախարյան Իմյուսա Տիգրանի	10000
8.	Ղուրջուդյան Սաթիկ Փայլակի	10000
9.	Բաղդասարյան Անահիտ Վոլոդյայի	50000
10.	Հարությունյան Լուսաբեր Խաչատուրի	50000
11.	Կարապետյան Անժելա Միխայելի	50000
	Ընդամենը	230000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝

 Բ. ԱՎԱԳՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2020 թվականի 23 դեկտեմբերի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 78-Ն

Արթիկ համայնք

23 դեկտեմբերի 2020թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ
ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ և 13-րդ հոդվածի 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի վարչական տարածքում 2021 թվականի աղբահանության իրականացման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի վարչական տարածքում 2021 թվականի սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 10 անդամներ՝

Կողմ՝ 8, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 1

Կողմ՝ 8

Վարդանյան Ոսկան

Ղուլիջոլյան Ռաֆիկ

Վարազյան Մեսրոպ

Նիկողոսյան Արմեն

Ձեռնպահ՝ 1

Զոփիկյան Արտակ


Դեմ՝ 1

Սահակյան Ահարոն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝



Բ. ԱՎԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
2020թվականի 23 դեկտեմբերի



Կարգ **ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի աղբահանության իրականացման**

Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը կարգավորում է համայնքի տարածքում աղբահանության կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի գործողությունը տարածվում է համայնքի ղեկավարի, ավագանու, աղբահանության կազմակերպման պատասխանատուների, համայնքի վարչական տարածքում գործող իրավաբանական և ֆիզիկական անձանց, համայնքում հիմնական և ժամանակավոր բնակվողների, աղբահանության ծառայություն մատուցող անձանց վրա:

3. Աղբահանությունը՝ բնակավայրում գոյացող աղբի հավաքման, պահման, փոխադրման և աղբավայրում տեղադրման գործողությունների ամբողջականությունն է: Այն պարտադիր և պարբերաբար իրականացվող աշխատանք է՝ օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ կանոնների և նորմերի պահպանմամբ: Աղբի հավաքման, պահման, փոխադրման և աղբավայրերի շահագործման հսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

4. Աղբահանության իրականացումը պետք է հիմնված լինի հետևյալ հիմնական նպատակների և սկզբունքների վրա՝

- 1) մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցում և չեզոքացում
- 2) բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովում
- 3) տարածքների աղտոտման, աղբակույտերի առաջացման անթույլատրելիություն և տարածքների մաքրում աղբից

Աղբի հավաքմանը, պահմանը, փոխադրմանը և տեղադրմանը ներկայացվող պահանջներ

5. Կենցաղային աղբը հավաքվում և պահվում է համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների՝ այդ նպատակով հատուկ սահմանված կամ նախատեսված տեղերում և համայնքի տրամադրած տարողություններում՝ աղբամաններում կամ աղբարկղերում:

6. Ոչ կենցաղային և խոշոր եգրաչափերի աղբը հավաքվում և պահվում է աղբահանության վճար վճարողների ձեռք բերած աղբամաններում կամ կոնտեյներներում կամ աղբահանության վճար վճարողի նախատեսած՝ իրեն պատկանող համապատասխան տարածքում, եթե համայնքի ավագանին այլ բան չի սահմանել: Վճարողների պահանջով համայնքը աղբամանները կարող է տրամադրել վարձակալության հիմունքներով:

7. Տնտեսվարող սուբյեկտները իրենց հարակից տարածքները պահում են պատշաճ սանիտարական վիճակում, որտեղ չեն պահեստավորում ապրանքներ, տարաներ կամ ավելորդ իրեր, սպառման թափոններ և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոններ:

Բնակելի շենքերի առաջին հարկերում տեղակայված առևտրի և սպասարկման օբյեկտների մուտքերի (այդ թվում և՛ բակային կողմից) հարակից տարածքները պահվում են պատշաճ սանիտարական վիճակում, չեն կուտակում ապրանքների արկղեր կամ ավելորդ իրեր, սպառման թափոններ և շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոններ: Նշված սուբյեկտները հարակից տարածքների սանիտարական վիճակը պատշաճ պահելու համար սեփական միջոցների հաշվին տարածքում պարտավոր են տեղադրել առնվազն հիսուն լիտր տարողությամբ աղբամաններ՝ աղբահանության ծառայություն մատուցողի կողմից աղբի հեռացման համար հարմար դիրքով:

8. Աղբի փոխադրումը իրականացնում են մասնագիտացված կազմակերպությունները՝ համաձայն աղբահանության կարգի: Աղբի փոխադրումը պետք է կազմակերպվի աղբատար փոխադրամիջոցներով, որոնց կառուցվածքը բացառում է շրջակա միջավայրի աղտոտումը: Աղբի փոխադրումը աղբարկղերից և աղբամաններից պետք է իրականացնել մինչև դրանց ամբողջությամբ լցվելը: Աղբարկղերից և աղբամաններից աղբի հեռացնելու ժամանակ աղբահանությունը իրականացնող կազմակերպության կողմից մաքրվում և տեղափոխվում է աղբարկղերի հարակից տարածքի աղբը(աղբարկղերից մինչև 10մ շառավղով): Աղբահանության ժամանակ տեղափոխվում են նաև աղբակույտերը և տերևակույտերը: Դրանց այրումն արգելվում է:

9. Աղբավայրերում աղբի տեղադրումն իրականացվում է աղբավայրերի շահագործման և սանիտարահիգիենիկ կանոնների պահանջների պահպանմամբ: Արգելվում է աղբի տեղադրումը դրա համար չնախատեսված վայրերում:

Որպես Արթիկ համայնքի աղբավայր շահագործվում է քաղաքից հյուսիս-արևմուտք ընկած հատվածում գործող աղբավայրը, որը քաղաքի կառուցապատման գոտուց հեռու է 3 կմ:

Աղբավայրի խնամքը՝ աղբավայրի հարթեցումը, հողով ծածկումը, մտնում է աղբահանություն իրականացնող կազմակերպության պարտականությունների մեջ:

10. Արգելվում է՝

- 1) աղբի պահելը և թափելը դրա համար չնախատեսված կամ չսահմանված վայրերում
- 2) աղբի տեղադրումը դրա համար չնախատեսված վայրերում
- 3) սպառման թափոնների այրումը
- 4) աղբի համար սահմանված վայրերում տեղադրելու անօգտագործելի բժշկական նյութեր, դեղորայք, դեղահաբեր, կաուստիկ թթուներ, ներկանյութեր, մեքենայի յուղեր, ցանկացած տեսակի հեղուկներ, պայտուցիկ նյութեր, ասբեստ կամ նմանատիպ այլ վտանգավոր նյութեր և թափոններ
- 5) աղբի համար նախատեսված վայրերում սատկած կենդանիների մարմինների տեղադրումը:

11. Աղբատար փոխադրամիջոցների թափքերը ախտահանվում են աղբաթափման վայրում՝ աղբահանությունը իրականացնող կազմակերպության կողմից ամիսը 1անգամ: Ախտահանման համար օգտագործվում է քլորակրի (10 %), լիզոլի (5-8%) կրեոլինի (5-8%), նավթալիզոլի (10-15%), ֆենոլի (3-5%) նատրիում մետափոսֆատի (1-3%) կամ Հայաստանի Հանրապետության «Դեղերի մասին» օրենքով սահմանված կարգով գրանցված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման և արտահանման կարգը հաստատելու մասին» N 581 որոշմամբ սահմանված կարգով ներմուծված վարակազերծիչ միջոցներով, ըստ վերջիններիս ուղեկցող հրահանգների:

12. Աղբահանությունը իրականացնող կազմակերպությունը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Աղբահանությունը իրականացնող կազմակերպության պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը կամ նրա լիազորած անձը (մարմինը):

13. Կատարվել են կենցաղային աղբի մեջ պարունակվող հիմնական նյութերի ծավալների փաստացի չափում, որի արդյունքում ստացված տվյալների հիման վրա հաշվարկվել են նյութերի խտությունները և կատարվել է Արթիկ համայնքի տարածքում առաջացող աղբի մոտավոր հաշվարկ: Փաստացի չափումների արդյունքը ներկայացվում է աղյուսակ 1-ի տվյալներում

Աղյուսակ 1

Կենցաղային աղբի մեջ պարունակվող հիմնական նյութեր	Խտություն կգ/ խոր.մ
Գոֆրակարտոնե արկղեր	30
Ալյումինե տարաներ	37
Պլաստիկե շշեր	38
Թուղթ	120
Ռետին	240
Ապակե տարաներ	300
Սննդի թափոններ	280
Պահածոների տարաներ	80
Պոլիէթիլենային տոպրակներ	90
Միջին ցուցանիշ	135

Որպես Արթիկ համայնքի բնակչության թվաքանակ հիմք է ընդունվել ՀՀ բնակչության պետական ռեգիստրի տրամադրած տվյալը, ըստ որի 2020 թվականին Արթիկ համայնքում հաշվառված **բնակչության թիվը կազմել է 20298 մարդ**:

Համադրելով տարբեր աղբյուրներից վերցված տվյալները՝ պարզվել է, որ վերջին տասնամյակում երկրագնդի բնակչության մեկ շնչի հաշվով տարեկան առաջանում է **1.31 խորանարդ մետր կենցաղային աղբ**:

Վերը նշված տվյալների հիման վրա կատարված հաշվարկների արդյունքում պարզվել է, որ Արթիկ համայնքում տարեկան առաջանում է **26590,3 խոր.մ. կենցաղային աղբ**՝

$$20298 \times 1.31 = 26590.3 (\text{խոր.մ})$$

Ըստ աղյուսակ 1.-ի տվյալների՝ **կենցաղային աղբի միջին խտության** ցուցանիշը կազմում է **135կգ/խոր.մ**: Համայնքում տարեկան առաջանում է **3589 տոննա աղբ**՝

$$26590.3 (\text{խոր.մ}) \times 135 (\text{կգ/խոր.մ}) = 35896905 (\text{կգ}):$$

14. Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 43.1 հոդվածի՝ աղբահանության աշխատանքները ժամանակին չկազմակերպելը, չսահմանված վայրում աղբ թափելը, աղբահանության համար անհրաժեշտ պայմաններ չապահովելը առաջացնում է՝

- 1) Աղբահանության աշխատանքները ժամանակին չկազմակերպելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:
 - 2) Սույն կետի 1-ին ենթակետի մասով նախատեսված խախտումը կրկին անգամ կատարելը մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:
 - 3) Չսահմանված և (կամ) չնախատեսված տեղերում ու վայրերում՝ աղբամուղերից, աղբահավաք խցերից, աղբարկղերից, աղբամաններից, աղբահավաք մեքենաներից, ինչպես նաև սահմանված կարգով կազմակերպված և (կամ) նախատեսված աղբավայրերից դուրս աղբ թափելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ քառասնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:
 - 4) Սույն կետի 3-րդ ենթակետի մասով նախատեսված խախտումը կրկին անգամ կատարելը մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչև հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:
 - 5) Առանց աղբահանության պայմանագրի աղբը հեռացնելը (թափելը) կամ պայմանագրով սահմանված վայրից (տեղից) դուրս աղբը հեռացնել (թափելը)՝ առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երեսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ քառասնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով: Սույն կետ 5-րդ ենթակետի մասով նախատեսված խախտումը կրկին անգամ կատարելը մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում ֆիզիկական անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկից մինչև հիսնապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հարյուրապատիկից մինչև երկուհարյուրապատիկի չափով:
15. Համայնքի միջոցների հաշվին Արթիկ համայնքի 2021 թվականի աղբահանության աշխատանքների իրականացումը հանձնել Հայաստանի Հանրապետության <<Գնումների մասին>> օրենսդրությանը համապատասխան ընտրված օպերատորին:
16. Արթիկ համայնքի 2021 թվականի աղբահանության աշխատանքների իրականացումը կազմակերպելու և իրականացնելու նպատակով Արթիկի համայնքապետարանին սեփականության իրավունքով պատկանող ՀՅՈՒՆԴԱՅԻ մակնիշի 172 LS 47 պետհամարանիշով ավտոմեքենան վարձակալության իրավունքով կարող է տրամադրվել ընտրված օպերատորին:

Ավտոմեքենայի պահպանման և շահագործման ծախսերը թողնել ընտրված օպերատորի վրա:

17. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույց

Արթիկ համայնքի վարչական տարածքից կենցաղային աղբի աղբահանությունը պետք է կատարվի համայնքի տարածքում տեղադրված աղբարկղերից, անհատական բնակելի տներից, բազմաբնակարան բնակելի շենքերից, հասարակական նշանակության և արտադրական կառույցներից:

Աղբամանները և աղբարկղերը պետք է ենթարկվեն ախտահանման ամիսը 1 անգամ աղբահանություն իրականացնող կազմակերպության կողմից:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 22-ը դեկտեմբերի 2009 թվականի N25-Ն հրամանի 1-ին բաժնի 2-րդ ենթաբաժնի 15-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 4-ը հոկտեմբերի 2007 թվականի N 1161-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետը՝ Արթիկ համայնքի վարչական տարածքում կենցաղային աղբի աղբահանություն իրականացնելիս պետք է առաջնորդվել հետևյալ նվազագույն ժամանակացույցով.

Աղբահանությունը կատարվում է՝

- **երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին** 2 աղյուսակում նշված վայրերում տեղադրված աղբարկղերից
- **երկուշաբթի և հինգշաբթի օրերին՝** Լմբատ 1, Լմբատ 2, Լմբատ 3 թաղամասերում գտնվող անհատական բնակելի տներից
- **երեքշաբթի և ուրբաթ օրերին՝** Նարեկացի փողոցից դեպի հյուսիս-արևելք ընկած թաղամասի անհատական բնակելի տներից (Սունդուկյան, Սևոյան, Դուրյան, Մուրացան, Մաշտոցի, ֆիդայիների, Գևորգ Չաուշի, Զորավար Անդրանիկի, Նար-Դոսի, Դեմիրճյան փողոցներ)
- **չորեքշաբթի և շաբաթ օրերին** հետևյալ փողոցներում գտնվող անհատական բնակելի տներից՝ Հակոբյան, Շիրվանզադե, Մյասնիկյան, Խանջյան, Սպանդարյան, Ղուկասյան, Կամո, Գրիգոր Զոհրապ (նրբանցքներով), Աղաբարյան (նրբանցքներով), Գրիգոր Լուսավորիչ (1-ին, 2-րդ, 3-րդ նրբանցքներով), Բաբաջանյան (նրբանցքներով), Տուֆագործների փողոցի նրբանցքներ, Ս.-Նովա
- **ամիսը 2 անգամ Լմբատավանքի տարածքից :**

18. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի վարչական տարածքում աղբարկղերի տեղադրման վայրերը և քանակը ըստ փողոցների

Աղյուսակ 2

N	Աղբամանի գտնվելու վայրը	Քանակ	տեսակ
1	Թումանյան փողոց	16	մետաղյա
2	Նալբանդյան փողոց	4	մետաղյա
3	Իսահակյան փողոց	5	մետաղյա
4	Ղարիբջանյան փողոց	3	մետաղյա
5	Գորկու փողոց	5	մետաղյա
6	Սասունցի Դավիթ փողոց	11	մետաղյա
7	Շինարարների փողոց	7	մետաղյա
8	Գործարանային փողոց	3	մետաղյա
9	Շահումյան փողոց	12	մետաղյա
10	Բաղրամյան փողոց	23	մետաղյա
11	Անկախության փողոց	10	մետաղյա
12	Տուֆագործների փողոց	15	մետաղյա
13	Գաբեգին Նժդեհի փողոց	9	մետաղյա
14	Տոնականյան փողոց	8	մետաղյա
15	Պռոշյան փողոց	2	մետաղյա
16	Աբովյան փողոց	9	մետաղյա
17	Տերյան փողոց	2	մետաղյա
18	Հակոբյան փողոց	3	մետաղյա
19	Շիրազի փողոց	3	մետաղյա
20	Պարույր Սեվակ փողոց	3	մետաղյա

21	Սաակաձե փողոց	4	մետաղյա
22	Գրիգոր Նարեկացի փողոց	20	մետաղյա
23	Շիրակացի փողոց	5	մետաղյա
24	Լմբատ թաղամաս	15	մետաղյա
25	Կոմիտաս թաղամաս	8	մետաղյա
	ԸՆԴԱՄԵՆԸ	205	

19. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի վարչական տարածքից ոչ կենցաղային և խոշոր եզրաչափերի աղբի հավաքման և տեղափոխման թույլտվության տրամադրման պայմանների և աղբահանության վճար վճարողների հաշվառման կարգ

Սույն կարգով սահմանվում է՝

1. Արթիկ համայնքի տարածքում ոչ կենցաղային և խոշոր եզրաչափերի աղբի հավաքման և փոխադրման թույլտվություն տալու կարգը:

Թույլտվությունը տրվում է համայնքի ղեկավարի կողմից: Թույլտվությունը կարող է տրվել իրավաբանական անձին, անհատ ձեռնարկատերերին, շինարարական և խոշոր եզրաչափերի աղբի աղբահանության վճար վճար վճարողներին՝ աղբն ինքնուրույն հավաքելու և փոխադրելու համար: Թույլտվություն ստանալու համար իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը համայնքի ղեկավարին է ներկայացնում հայտ: Թույլտվության տալու մասին հայտի բավարարումը ձևակերպվում է համայնքի ղեկավարի որոշման հիման վրա: Թույլտվություն տալու համար հայտատուից գանձվում է տեղական տուրք՝ համաձայն ավագանու կողմից սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափին և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքին համապատասխան: Տեղական տուրքի վճարումն հավաստող անդորրագրի և հայտի ստանալուն հաջորդող 3 օրվա ընթացքում հաստատված թույլտվությունը հանձնվում է հայտատուին: Թույլտվության ստանալու մասին հայտը մերժվում է, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, չեն համապատասխանում ավագանու կողմից հաստատված պայմաններին: Հայտը գրավոր մերժվում է մուտքագրման օրվանից երկու օրվա ընթացքում: Հայտը մերժելու դեպքում պետք է հստակ նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը: Թույլտվությունը չի կարող հայտատուի կողմից փոխանցվել այլ անձի կամ օգտագործվել այլ անձի կողմից:


2. Արթիկ համայնքում աղբահանության վճար վճարողներն են համայնքի վարչական տարածքում անշարժ գույքի, այդ թվում՝ բնակելի շինության սեփականատեր համարվող կամ որևէ այլ իրավունքով այդ գույքը տիրապետող կամ օգտագործող ֆիզիկական անձինք (ներառյալ՝ անհատ ձեռնարկատերը և արտոնագրային հարկ վճարողը), իրավաբանական անձինք, հիմնարկները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իսկ պետական կամ համայնքային սեփականություն համարվող անշարժ գույքը վարձակալության կամ անհատույց օգտագործման հիմքով քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից տիրապետման դեպքում՝ վարձակալը, անհատույց օգտագործողը:

Աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը (մուտքագրումը) համայնքի բյուջե իրականացվում է համայնքի կողմից:

Արթիկ համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառումը, վճարի հաշվարկումը և մուտքագրումը համայնքի բյուջե կատարվում է <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> ՀՀ օրենքներին համապատասխան՝ համայնքի ավագանու կողմից սահմանված վճարի դրույքաճափերին համապատասխան՝

Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Արթիկ համայնքի ղեկավարը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ՝  Բ. ԱՎԱԳՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի վարչական տարածքում սանիտարական մաքրման սխեման

1. Սանիտարական մաքրման աշխատանքներ

Արթիկ համայնքի սանիտարական մաքրումը ներառում է՝ համայնքի ընդհանուր օգտագործման տարածքների(փողոցների, այգիների, պուրակների, հրապարակների, բակերի, մայթերի, անցումների, սիզամարզերի, կամուրջների և ընդհանուր օգտագործման այլ տարածքների) մաքրումը աղբից, տերևակույտերից, փոշուց, կենդանիների դիակներից, անցումների և մայթերի մաքրումը ձյունից և սառույցից, համայնքի ընդհանուր օգտագործման համար տեղադրված աղբամանների սպասարկումը:

Այն իր մեջ ընդգրկում է ձեռքի և մեքենայացված տեխնելոգիաների կիրառմամբ, համապատասխան սանիտարական նորմերի պահպանմամբ ընդհանուր օգտագործման տարածքների մաքրումը աղբից, փոշուց, տերևակույտերից, կենդանիների դիակներից՝ նպատակ ունենալով բարելավել միկրոկլիման և նվազեցնել օդի փոշոտվածության աստիճանը:Ամառային մաքրման աշխատանքները պետք է ավարտվեն առավոտյան 8:30-ին:

Հավաքարարները պետք է՝

. մաքրեն ասֆալտապատ ճանապարհների երթևեկելի մասի 0,75 մ լայնությամբ գոտին (հաշված եզրաքարերից),

. մաքրվող տարածքներից աղբը հավաքեն այդ նպատակի համար հատկացված տեղերում՝ կույտերով,

.կանաչ տարածքները (սիզամարզերը) մաքրեն ձեռքի մաքրման միջոցով՝ բացառելով բույսերի վնասումը,

.մաքրեն ջրատար ցանցերի կափարիչները,հատուկ ուշադրություն պետք է դարձնեն սպասարկվող տարածքում տեղադրված աղբարկղերին

Մեքենայացված մաքրման խնդիրն է ապահովել փողոցներից աղբի հեռացումը:

Աշխատանքները կատարվում են ամենօրյա ձեռքի և մեքենայացված եղանակներով:

ՀԱՇՎԱՐԿ

Սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքներ

Կատարվել է Արթիկ համայնքի սանիտարական մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման տարածքների փաստացի չափագրում, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալների և առաջացող աղբի մոտավոր հաշվարկ:

Փողոցների,մայթերի և սիզամարզերի սանիտարական մաքրման ցանկ		
ՀՀ	Սանիտարական մաքրման ենթակա տարածքների անվանումը	Սպասարկվող տարածքի մակերեսը քառ.մ
1.	Անկախություն	4490
2.	Բաղրամյան	5800
3.	Ազատության հրապարակ/ներառյալ Հայրենական Մեծ Պատերազմի զոհերի հիշատակը հավերժացնող	4960

	հուշարձանը և հարակից տարածքը/	
4.	Չարենց /Անկախությունից Բաղրամյան ընկած հատված	430
5.	Սվերդլով	750
6.	Գարեգին Նժդեհ	1800
7.	Տոնականյան /մինչև եկեղեցի/	1350
8.	Աբովյան էստակադա, մինչև Ղարիբջանյան էստակադա	3150
9.	Ղարիբջանյան	3150
10.	Սասունցի Դավիթ /մինչև Գորկի փողոց/	5535
11.	Շահումյան	6070
12.	Գորկի	2150
13.	Սահակաձե	1980
14.	Կոմիտաս	2565
15.	Գր.Նարեկացի/սկզբնամասը մինչև Կոմիտասի հետ հատվելը	2100
16.	Երկաթուղայիններ/Անկախությունից մինչև Բաղրամյան/	450
	Ընդամենը	46730

Արթիկ համայնքի ընդհանուր օգտագործման տարածքներից մաքրման տակ ներառված են 128102 քառ. մ.,որից **46730 քառ.մ.** ձեռքով մաքրման: Փաստացի ուսումնասիրությունների և միջինացված հաշվարկների արդյունքում պարզ է դարձել,որ ասֆալտապատ փողոցների երթևեկելի մասի՝ 0,75 մ լայնությամբ գոտիներից (հաշված եզրաքարերից), մայթերից և սիզամարգերից ընդհանուր վերցրած 1 քառ.մ.-ից հավաքվում է **0,28 կգ** աղբ: Քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքների մաքրման հետևանքով օրական առաջացած աղբի քանակը կկազմի **13 տոննա՝**

$$0,28 \times 46730 = 13084,4 \text{ (կգ)}$$

Քաղաքի ընդհանուր օգտագործման տարածքների մաքրման հետևանքով տարեկան առաջացած աղբի քանակը կկազմի **3530 տոննա՝**

$$13084,4 \times 270\text{օր}=3532788 \text{ (կգ)}$$

2. Ձյան մաքրման աշխատանքներ

Այն իր մեջ ներառում է ընդհանուր օգտագործման փողոցների, կամուրջների մաքրումը ձյունից և սառույցից: Ձյան մաքրումը իրականացվում է ձնամաքրող տեխնիկայի միջոցով, որից հետո իրականացվում է աշխատանք՝ մաքրված տարածքների սառցակալման դեմ՝ ավազ-աղային խառնուրդով: Տարածքներից հավաքված ձյունը պետք է վերածվի թմբերի կամ կույտերի՝ մայթերին զուգահեռ:

Տրանսպորտի նորմալ երթևեկությունն ապահովելու նպատակով ձնաթմբերը պետք է կուտակվեն այնպես,որ նրանց հիմքերի լայնությունը 1,5 մետրից ավել չլինի:

Աշխատանքները պետք է կատարվեն ըստ ժամանակացույցի և հաշվարկվեն 1կմ երկարությամբ և 9մ. լայնությամբ փողոցի ձյան մաքրման հաշվարկի ձևով, որպես հաշվարկային մեկ միավոր:

Կատարվել է Արթիկ համայնքի ձյան մաքրման ենթակա ընդհանուր օգտագործման ճանապարհների փաստացի չափագրում և աշխատանքների ծավալների ու գնի մոտավոր հաշվարկ:

Համայնքի տարածքում ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 47,81 կմ, որից 6,74 կմ հատվածը հանրապետական նշանակության: Ձմեռային մաքրման տակ ներառված են **41,07 կմ** ավտոճանապարհներ, որոնք 9 մ լայնությամբ 1 կմ երկարությամբ հաշվարկի ձևով կկազմեն 35,0 կմ

